ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան *22.03.2014թ.*

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և մաթեմատիկական կրթամասերի առարկաների առարկայական ծրագրերի կազմումը և իրականացումը:

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում:

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

3. ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի 2014-2015 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում:

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

4. ԵՊՀ ԻՄ 2014-2018 ուսումնական տարիների /առկա ուսուցման/ և 2014-2019 ուսումնական տարիների /հեռակա ուսուցման/ ուսումնական պլանների կատարման ընթացքի մասին:

   /Զեկուցող Ա.Յ. Դավթյան/

5. Փոփոխություն ԵՊՀ ԻՄ կառուցվածքում:

   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

6. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ *<<Ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և մաթեմատիկական կրթամասերի առարկաների առարկայական ծրագրերի կազմումը և իրականացումը>>* հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նշվեց, որ հացը բավականին կարևոր է և արդիական, կատարվել են մանրակրկիտ ուսումնասիրություններ և քննարկումներ նաև տնօրինության նիստերում: Մասնառրապես նշվեց որ հիշյալ կրթաբլոկների առարկայակն ծրագրերը պետք է կազմվեն և իրականացվեն հաշվի առնելով տվյալ մասնագիտության առանձնահատկությունները, այնպես որ առավելագույնս նպաստի տվյալ մասնագիտության ընկալման պրոցեսին: Տնօրեն Ս.Ա.Առաքելյանը առաջարկեց ստեղծել հանձնաժողով որը կաջակցի հիշյալ կրթաբլոկների առարկաների առարկայական ծրագրերի ճիշտ կազմմանը:

Արտահայտվեցին – Ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Վ. Բրուտյանը և Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Հ Մարզպանյանը, որոնք նույնպես կարևորեցին Տնօրեն Ս.Ա.Առաքելյանի կողմից նշված հարցադրումները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյում ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և մաթեմատիկական կրթամասերի առարկաների առարկայական ծրագրերի կազմման և իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով հաետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ

Ս.Ա. Առաքելյան — ԵՊՀ ԻՄ տնօրեն

Մաթեմատիկական առարկաներ

Ա.Ցուցուլյան
Մ. Զաքարյան

Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան
Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբ./վ

Ն. Խուդավերդյան	Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան
Հ. Մարզպանյան	Ընդհանուր տնտեսագիտության ամբ./վ
Մանկավարժություն	
Վ. Բրուտյան	Մանկավարժություն և հոգեբանություն ամբ./վ
Պատմություն	
Ս.Ա.Առաքելյան	ԵՊՀ ԻՄ տնօրեն
Վ. Ալեքսանյան	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան
Հայոց լեզու	
Վ. Ավագյան	Հայոց լեզվի և գրականության ամբ./վ
Ա. Սարիատյան	Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
Ռուսաց Լեզու	
Լ. Հարությունյան	Օտար լեզուների ամբիոնի ասիստենտ
Ֆրանսերեն Լեզու	
Ա. Մարդանյան	Օտար լեզուների ամբիոնի ասիստենտ
Մ. Աղբալյան	Օտար լեզուների ամբիոնի դասախոս
Անգլերեն Լեզու	
Ք. Հարությունյան	Օտար լեզուների ամբ./վ, դոցենտ
Ա. Սիմոնյան	Օտար լեզուների ամբիոնի դասախոս

Օրակարգի երկրորդ՝ *«ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում»* հարցի կապակցությամբ լսեցին տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա մանրակրկիտ և հիմնավորված նշեց արհրաժեշտ փոփոխությունների մասին, որոնք կատարվում են պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձները բարձրացնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ

2. Հաստատել ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը, ներկայացված տարբերակով: /Կցվում է/

Օրակարգի երրորդ՝ *«ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի 2014-2015 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում»* հարցի կապակցությամբ լսեցին տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Ներկայացնելով մասնագիտությունների

2013-2014 ուստարում ընդունվել է ընդհամենը 7 ուսանող, որը վկայում է այդ մասնագիտության պահանջարկի բացակայության մասին մեր ՄՈՒՀ-ում, նշվեց նաև որ սպսվածից քիչ են եղել դիմորդները նաև «Էկոլոգիական քիմիա» մասնագիտությամբ առկա ուսուցման դիմորդները: Նա նշեց, որ ելնելով արտաքին շահեկիցների պահանջարկի ուսումնասիրության արդյունքներից անհրաժեշտ է բնագիտական ֆակուլտետի կազմում առակա ուսուցմամբ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությամբ, կազմակերպել ընդունելություն:

ՈՐՈՇԵՑԻՆ

3. Ներկայացված ցանկը ուղարկել Երևանի պետական համալսարան՝ հաստատման:

Օրակարգի չորրորդ՝ ***«ԵՊՀ ԻՄ 2014-2018 ուսումնական տարիների /առկա ուսուցման/ և 2014-2019 ուսումնական տարիների /հեռակա ուսուցման/ ուսումնական պլանների կատարման ընթացքի մասին»*** լսեցին ուսումնական վարչության պետ Ա.Ց. Դավթյանի հաղորդումը, նա ներկայացրեց կատարված աշխատանքները և նշեց, որ աշխատանքները ընթանում են նորմալ հունով և ճիշտ ժամանակին կներկայացվի հաստատման: Հարցի կապակցությամբ արտահայտվեց նաև ԵՊՀ ԻՄ տնօրեն պարոն Ս.Ա.Առաքելյանը, նա մասնավորապես նշեց որ ՄՈՒՀ-ի խնդիրն է տալ իր բնագավառում մրցունակ մասնագետ և առարկայական ծրագրերը պետք է կազմվեն այնպես, որ մեր շրջանավարտները համապատասխան բնագավառում ունենան անհրաժեշտ հմտություններ և կարողություններ, այնպես, որ կարողանան լուծել կոնկրետ խնդիրներ իրեց բնագավառում:

ՈՐՈՇԵՑԻՆ

4. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի հինգերորդ՝ ***«Փոփոխություն ԵՊՀ ԻՄ կառուցվածքում»*** հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ տնօրեն պարոն Ս.Ա.Առաքելյանի հաղորդումը, որտեղ մասնավորապես նշվում էր, որ ՄՈՒՀ-ը խնդիրներ ունի գիտական գործունեության, արտաքին կապերի, ինչպես նաև տնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման գործում, որոնք լուծելու համար անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ միջոցներ, մասնավորապես նաև կառուցվածքային փոփոխություններ: Նշվեց, որ ելնելով ԵՊՀ ԻՄ –ում տնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման կարևորությունից ՄՈՒՀ-ում անհրաժեշտ

կապերի և գիտական քաղաքականությամբ մասնաճյուղը չունի աշխատանքները համակարգող ծառայություն, ուստի անհրաժեշտ է ստեղծել *«Արտաքին կապերի և գիտական քաղաքականության բաժին»:*

ՈՐՈՇԵՑԻՆ

5. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստեղծել *«Վարչատնտեսական վարչություն»*:

ՈՐՈՇԵՑԻՆ

6. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստեղծել արտաքին կապերի և գիտական քաղաքականությամբ աշխատանքները համակարգող ծառայություն՝ *«Արտաքին կապերի և գիտական քաղաքականության բաժին»:*

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.Ս. ԱԹՈՅԱՆ